

Տղամարդկանց և կանանց հուզագրական հաղորդակցության ոչ խոսքային միջոցները

Ա. Տ. Կնյազյան; Տ. Ռ. Մարգարյան

Երևանի պետական համալսարան
Corresponding authors. E-mail: annaknyazyan@ysu; tatevik348.margarian95@gmail.com

Paper received 10.06.21; Accepted for publication 19.06.21.

<https://doi.org/10.31174/SEND-HS2021-253IX45-08>

Ամփոփագիր: Հոդվածում առանձնահատուկ դիտարկվում են տղամարդկանց և կանանց խոսքում հուզարտահայտչական միջոցները ոչ խոսքային մակարդակում: Կանանց ոչ խոսքային վարքը տարբերվում է տղամարդկանց համանման վարքից: Այդ առումով առանձնապես կարևոր է հաղորդակցության ոչ խոսքային բաղադրիչների հետազոտումը, որոնք արտացոլում են մարդու հուզական արձագանքները: Ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց հուզական արձագանքներն արտահայտելու համար կիրառվում են հաղորդակցության ոչ խոսքային բաղադրիչների ամենատարբեր տեսակները: Զգացմունքները, ինչպես տեղեկատվությունը, կարող են հաղորդվել մեկ կամ մի քանի ոչ խոսքային միջոցներով:

Բանալի բառեր: գենդեր, ոչ խոսքային բաղադրիչներ, շարժաբանական բաղադրիչներ, շոշափողական միջոցներ, հուզապրումներ,

Հասարակության անդամների միջև հաղորդակցությունը ոչ միայն նպատակաուղղված է, այլև իրավիճակային կողմնորոշում ունի, որը կապված է խոսողի և խոսակցի անձերի հետ: Հաղորդակցման գործընթացին ամենաամփոփական մասնակցություն են ունենում բազմաթիվ գործոններ՝ բնախոսական, հանրային, որոնք լրացուցիչ տեղեկատվություն են կրում հասցեատիրոջ վերաբերյալ: Հաղորդակցությունը դիտարկվում է ոչ միայն որպես տեղեկատվության խոսքային փոխանակման գիտակցված, բանականորեն ձևակերպված ակտ, այլև անմիջական հուզական շփում մարդկանց միջև: Այսպիսով, հաղորդակցությունը ոչ թե զուտ լեզվական, այլ գործաբանական-հոգեկան-լեզվական կարգ է: Առանց խոսքի իրականացվող ցանկացած շփում համարվում է ոչ խոսքային հաղորդակցություն: Դա հենց հաղորդակցության այն մասն է, որը մենք չենք գիտակցում, բայց որը գլխավորն է ցանկացած շփման ժամանակ:

Մույն հոդվածում անգլիական կենցաղային անեկդոտներում հետազոտության են ենթարկվում տղամարդկանց և կանանց խոսքում հուզարտահայտչական միջոցները ոչ խոսքային մակարդակում[6].

- շարժաբանության միջոցներ (դիմախոսություն ու ժեստեր),
- շոշափողական միջոցներ (ձեռքսեղմում, համբույր, ծափ, ուսին կամ մեջքին թփփփացնել):

Ոչ խոսքային հաղորդակցությունը այնքան էլ կուռ կառուցվածք չունի, ինչպես խոսքայինը: Գոյություն չունեն տարածում գտած բառարաններ և ժեստերի, դիմախոսության դասավանդման կանոններ, որոնց օգնությամբ մենք ի վիճակի լինենք միանշանակորեն հաղորդելու մեր զգացմունքները: Դրանք հաղորդելը կախված է բազմաթիվ գործոններից և հաճախ տեղի

է ունենում ոչ միանշանակ ձևով: Բոլոր արտալեզվական գործոնները օժանդակ դեր են կատարում շփվելիս: Հարկավոր է ոչ խոսքային լեզվին դասել նաև արտահայտչական շարժումները, որոնք խոսողի ներքին հուզավիճակի մասին են ազդարարում:

Ոչ խոսքային շփումը կարող է լրացնել կամ ուժեղացնել բառային շփումը, կամ հակասել դրան ու թուլացնել [1;7]: Թեպետ ոչ խոսքային շփումը հաճախ անգիտակցական գործընթաց է, ներկայումս այն բավականաչափ լավ ուսումնասիրված է և անհրաժեշտ արդյունքի հասնելու համար հաջողությամբ կարող է վերահսկվել:

Արտահայտչական շարժումները որոշակի անհրաժեշտ գործառույթ են կատարում, իսկ ավելի ճիշտ՝ շփման գործառույթ: Դրանք միաժամանակ հաղորդման և ներգործման միջոցներ են. դա ասես խոսք է, որը չունի բառեր, բայց լի է արտահայտչականությամբ: Արտահայտչական շարժման խորհրդանշականությունը ի հայտ է գալիս շփման փորձի երկարատև կուտակման ընթացքում: Շարժումների ձևերն ու տեսակներն ամրագրվում են այն հասարակական միջավայրի կողմից, որին մենք պատկանում ենք: Որոշ դեպքերում շարժումները պայմանական կարգավիճակ են ձեռք բերում: Մենք անում ենք հենց այս կամ այն շարժումն այն պատճառով, որովհետև, ինչպես մենք գիտենք, այն որոշակի նշանակություն ունի մյուսների համար: Այդպիսի շարժումները լիովին հասկանալու համար պետք է կարողանանք գնահատել այն ազդեցությունների բնույթը, որոնք ներգործում են շրջապատողների վրա: Արտահայտչական շարժումները մեր վարքագծում, այլ մարդկանց կողմից ընկալվելով և մեկնաբանվելով, որոշակի նշանակություն են ձեռք բերում նրանց համար:

Հուզապրումների ժամանակ փոփոխությունների է

ենթարկվում ամբողջ օրգանիզմը՝ տարածվելով դեմքի և ողջ մարմնի մկանների վրա: Առավել հաճախ, որպես արտահայտչականության ամենաեական տարրեր՝ հանդես են գալիս դիմախոսությունն և ձայնի հնչերանգը: Սովորաբար գործողությունը չի սպառվում իր արտաքին կողմով, այլ ունի նաև ներքին բովանդակություն: Դրա օգնությամբ մարդն արտահայտում է իր վերաբերմունքը շրջապատող աշխարհի նկատմամբ:

Մարդկանց՝ իրար ճանաչելու գործընթացը իրականացվում է սոցիալական իրականության արտացոլման երկու մակարդակներում՝ զգայական (մարդու ընկալումը մարդու կողմից) և տրամաբանական (այլ մարդու՝ որպես անհատի մասին հասկացությունը):

Գենդերային անհատի հույզերի ուսումնասիրությունը չի կարող լիարժեք համարվել առանց հիշատակելու նրանց այնպիսի կարևոր բաղկացուցիչի մասին, ինչպիսիք են ոչ խոսքային ձևերը:

Լեզվական նյութն ուսումնասիրելիս նկատել ենք, որ անգլիական անեկդոտներում ոչ խոսքային միջոցներ կիրառելիս շեշտը հիմնականում դրվում է **շարժաբանական բաղադրիչների (դիմախոսության և ժեստերի)** նկարագրման վրա:

Ոչ խոսքային վարքում արտացոլվող գենդերային տարբերությունները որոշարկելիս պարզ է դառնում, որ առանձին ժեստեր կամ նույնիսկ ոչ խոսքային վարքի ամբողջական ոճեր բնորոշ են կանանց և համապատասխանաբար՝ տղամարդկանց՝ անկախ իրական սեռից և կատարողից: Այսպես օրինակ՝ անգլիական անեկդոտներում տղամարդիկ, արտահայտելով շփոթվածություն, հաճախ ձեռքով շփում են կզակը կամ քիթը, իսկ կանայք՝ այտերը կամ պարանոցը: Գոյություն ունեն ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց բնորոշ կեցվածքներ, ժեստեր, քայլվածք: Հասարակության մեջ վաղուց գոյություն ունեն ավանդական դերաբաշխում, սոցիալական ծիսակարգեր, կարծրատիպեր և գնահատականներ, որոնք վերաբերում են տղամարդկանց և կանանց հույզերի արտահայտչականությանը:

Մեր կողմից ուսումնասիրվող նյութը վերլուծելիս առանձնացրել ենք հաղորդակցվողների հոգեբանական վիճակը արձանագրող հետևյալ բառայինները՝ **redden, blanch, choke, gasp, flutter, palpitate, shiver**, և այլն: Ընդ որում, անգլիական լեզուն անեկդոտներում կանանց հոգեբանական վիճակը բնութագրելիս առավել գործածական են՝ **blush, flush, redden, tremble, shiver** բառայինները: Անգլիական անեկդոտներում տղամարդկանց հոգեբանական վիճակը բնութագրելու համար շատ հաճախ գործածվում են **“choke, pant”** միավորները:

Հանդիպում են նաև հաղորդակցության որոշակի

ժեստային բաղադրիչներ [4;8]: Ուսումնասիրվող նյութը վերլուծելիս ոչ խոսքային հաղորդակցության միջոցների ողջ զինանոցից, առանձնացվել են հաղորդակցության որոշակի ժեստային բաղադրիչներ, որոնք կազմել են ամենաբազմաբանակ խումբը: Ընդհանուր առմամբ տղամարդկանց և կանանց վարքին բնորոշ են տարբեր ժեստեր, սակայն մի քանիսը բնորոշ են անգլիական լեզվամշակույթին ընդհանրապես: Օրինակ՝ **“clench one’s fists”** (բռունցքը սեղանին խփել, բռունցքները սեղմել), **“pull the plug”** (ձեռքը թափ տալ) ժեստերը տղամարդկանց համար, բնութագրական և կարծրատիպային են, նույնը չի կարելի ասել կանանց վերաբերյալ: Տղամարդկանց բնորոշ ժեստ է **“scratch one’s head”**-ը (ծոծրակը քորել), որը արտահայտում է **զարմանք, տարակուսանք, վարանմունք**:

Ծայրահեղ նյարդային վիճակում մարդը հաճախ չի կարողանում տեղը նստել և սկսում է քայլել: Անգլիական կենցաղային անեկդոտներում զայրույթի հույզի այդքան հաճախադեպ ոչ խոսքային դրսևորում նկատել ենք միայն տղամարդկանց վարքում: Իսկ դրական սպասումները տղամարդիկ արտահայտում են **“rub one’s hands”**-ը (ձեռքերը շփել) ժեստի օգնությամբ:

Ավանդաբար աղջիկներին սովորեցնում են, որ դյուրաբորբոքությունը զրկում է նրանց գրավչությունից: Սակայն ժամանակակից կանայք իրենց զայրույթն արտահայտում են նույնքան հաճախակի և նույն սաստկությամբ և ճիշտ այնպես, ինչպես տղամարդիկ: Այսպես օրինակ՝ **“grab someone’s hair”** ժեստը (քաշել ինչ-որ մեկի մազերը), որը կանանց բնորոշ ժեստ-ռեակցիա է, օգտագործվում է անգլիական անեկդոտներում **զայրույթի** հուզավիճակում: **“Throw up one’s hands”** (ձեռքերն իրար զարկել) ժեստը բնորոշ է թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց: Ամենաբնութագրական հույզերը, որոնց դեպքում կիրառվում է այդ ժեստը, հետևյալներն են՝ **զարմանքը, վրդովմունքը, վախը, հուսահատությունը, ուրախությունը**:

Անգլիական անեկդոտներում **“cover one’s face with one’s hands”** (երեսը ձեռքերով փակել) ժեստը առավելապես օգտագործում են կանայք, երբ լալիս են, վշտանում, այլայլվում, ամաչում: Տվյալ ժեստը նախատեսված է հենց հույզի արտահայտման, այլ ոչ թե հույզը թաքցնելու համար. սովորաբար թաքցնում են արցունքները (որպես վշտի արտահայտություն) կամ այտերի կարմրելը (որպես ամաչելու արտահայտություն), այլ ոչ թե բուն վշտի կամ ամոթի հույզերը: Անգլիական անեկդոտներում **“bury one’s head in one’s hands”**; **“bow one’s head”** ժեստը գլխավորապես օգտագործում են տղամարդիկ:

“Wring one’s hands” (ձեռքերը կտրատել) ժեստը սովորաբար օգտագործվում է այն իրավիճակում, երբ ժեստը ցույց տվողը շատ է ուզում, բայց ոչ մի կերպ չի կարող ազդել իրադարձությունների ընթացքի վրա:

Մեկական անգործության զգացողությունը տանջալից է ժեստի հեղինակի համար: Նա ձգտում է ինչ-որ բան անել և կատարում է ժեստային շարժում: Սովորաբար ժեստի հեղինակը դրա հետ մեկտեղ ուժեղ բացասական հուզապրում է ունենում՝ **վիշտ, վախ ինչ-որ մեկի համար, թախիծ** և այլն: Անգլիական անեկդոտներում այդ ժեստը ավելի հաճախ օգտագործում են կանայք: Իգական սեռի ներկայացուցիչներին բնորոշ ժեստերից է նաև **“stamp one’s foot”**-ը (ոտքերով դռփել), որը նախատիպորեն կապված է քմահաճ երեխայի կամ կնոջ հետ:

Անգլիական ՈւկենցադայինՈւ անեկդոտներում միայն կնոջն է բնորոշ (տղամարդու վարքում այն չենք արձանագրել) **faint** (ուշաթափվել) ժեստը՝ մի ամբողջ շարք հույզերի ազդեցությամբ՝ **ուրախության, վշտի, վախի:**

Ոչ խոսքային հաղորդակցության ժեստային բաղադրիչների կիրառումը տեղաբաշխելով ըստ որոշակի հույզերի՝ մենք նկատում ենք, որ տղամարդկանց շրջանում առկա հույզերի մեջ քանակապես գերակշռում է **զայրույթի** հույզը, մյուս բոլոր հուզավիճակներում կանայք իրենց խոսքն ավելի հաճախակի են ժեստերով ուղեկցում, իսկ **ուրախության** հույզը դրանց շարքում գենդերային առումով առաջնային է:

Անգլիական անեկդոտներում մարդու ոչ խոսքային վարքում **դիմախոսության բաղադրիչներից** [2] կենտրոնական տեղ է գրավում դեմքի արտահայտությունը:

Համարվում է, որ դիմախոսության բաղադրիչները ոչ միայն արտահայտում են հույզեր, այլ հուզապրումները սաստկացնող գործոններ են: Հույզերի դիմախոսության դրսևորումը, ինչպես և հաղորդակցվողի հուզավիճակը ճանաչելու ունակությունը հույզերի ու հուզականության հետազոտման կարևոր տեսանկյունն է, քանի որ ոչ խոսքային արտահայտչաձևերը լիովին կարող են հանդես գալ որպես հույզերի օբյեկտիվ ցուցանիշներ:

Ներկայումս համընդհանուր ճանաչման է արժանացել դեմքի արտահայտություններում հիմնական հույզերի (**զայրույթ, տխրություն, վախ, ուրախություն, տհաճություն, զարմանք**) արտացոլումը, [3] և չեն ժխտվում նաև դիմախոսության միջնակությանի որոշ տարբերություններ: Դեմքը մարդկային կերպարի կարևորագույն բնութագիրն է: Ջղաձգումը փոխում է դեմքի արտահայտությունը և հայտնում մարդու հոգեվիճակի մասին: Վաղուց հայտնի է, որ տղամարդու դիմախոսությունն ուժի և մտքի մարմնացում է, իսկ կնոջ դիմախոսությունը՝ թուլության ու զգայականության:

Դիմախոսությամբ դրսևորված հույզերի (**վախ, հակակրանք, ուրախություն, զայրույթ, զարմանք**) մեծ մասն առավել ճիշտ է ընկալվում կանանց դեպքում: Թաքնված ենթատեքստի նկատմամբ կանանց

գերզգայունության պատճառը բնածին ոչ խոսքային ազդանշանները (դիրքերը, ժեստերը, մարմնի շարժումները) տեսնելու և վերծանելու նրանց կարողությունն է: Դրանք տեղի են ունենում ենթազգիտակցաբար և ցույց են տալիս խոսողի հոգեվիճակը:

Անգլիական ՈւկենցադայինՈւ անեկդոտներում կանանց վարքում նկատվել է այնպիսի շարժասույթ, ինչպիսին է **“watch, listen with an open mouth”**, որը հաստուկ չէ տղամարդկանց դիմախոսության դրսևորմանը:

Ոչ խոսքային վարքագծի տարբերի թվին է պատկանում նաև **աչքերի միջոցով** հաղորդակցումը, որը հիմնված է նշանների օպտիկական-շարժաբանական (կինետիկ) համակարգի (կամ կինետիկայի) վրա:

Կանանց դիմախոսական դրսևորումներում առաջատարը աչքերի այն արտահայտությունն է կամ հայացքը, որը հաղորդվում է այդ շարժասույթի հուզարտահայտչական տարբեր որոշարկիչների օգնությամբ՝ **“look down”**-ը (ցույց է տալիս **սուղթ, վարանմունք, վիշտ, դժգոհություն**), **“widen the eyes”, “flutter the eyes”**-ը (հատուկ է **վախի և զարմանքի** դեպքում): Աչքերի արտահայտությամբ կարելի է հասկանալ և վերծանել ցանկացած հուզական տեղեկատվություն:

Բացի անգլիական ՈւկենցադայինՈւ անեկդոտներում մեզ հանդիպած վերոհիշյալ բաղադրիչներից՝ մեր կարծիքով դիմախոսությանն են վերաբերում նաև հետևյալ շարժումները՝ **շրթունքներով**, հատկապես կանանց խոսքում, **հոնքերով, ճակատով**, հատկապես տղամարդկանց խոսքում, որոնք հաճախադեպ են բազմաբնույթ հույզեր արտահայտելու համար:

Վերոշարադրյալ լեզվական փաստերը թույլ են տալիս պարզել, որ ոչ խոսքային հաղորդակցության դիմախոսության միջոցները գենդերային առումով առաջնային են ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց համար **ուրախության** հուզապրումի դեպքում: **Չայրույթ կամ զարմանք** արտահայտելիս տղամարդկանց համար այդ շարժասույթը գենդերային առումով տեղին է: Կանայք տղամարդկանցից ավելի հաճախ են իրենց խոսքն ուղեկցում դեմքի տարբեր արտահայտություններով՝ **տխրության ու վախի** հուզավիճակներում: Հույզերի դիմախոսական դրսևորումը առհասարակ բնորոշ է կանանց վարքագծին (*տե՛ս աղյուսակ 1*), որի հիման վրա կարելի է ենթադրել, որ կանայք չեն կարողանում թաքցնել իրենց հույզերը:

Ոչ խոսքային վարքի հաջորդ բաղադրիչը, որը մենք կդիտարկենք սույն հոդվածում՝ **շոշափողական միջոցներն են** [5]: Անգլիական անեկդոտներում տարբերություններ նկատվում են նաև տղամարդկանց ու կանանց շոշափողական վարքում: Տակեսիկան ուսումնասիրում է շփման

իրադրությունում հայումը՝ ձեռքսեղմում, համբույր, շոշափում, շոյում, վանում և այլն: Ինչպես ցույց է տվել մեր նյութի վերլուծությունը անգլիական անեկդոտներում դիպչելու զանազան ձևերի օգնությամբ հաղորդակցության գործընթացը կարող է ստանալ տարբեր բնույթ և ընթանալ տարբեր արդյունավետությամբ: Տակեսիկան հիմնվում է երկու գլխավոր տարրերի վրա՝ ֆիզիկական շփման և տարածության մեջ մարմնի դիրքի: Ֆիզիկական շփումը (**հայումը, շոշափումը, համբույրը, ուսին թփթփացնելը**) մարդկանց միջև փոխգործակցության կարևոր միջոց է: Հպման միջոցով մարդն արտահայտում է ամենաուժեղ զգացմունքները՝ սերն ու աստելությունը: Շոշափողական վարքը, որպես ոչ խոսքային հաղորդակցության բաղկացուցիչ, ցանկացած վիճակի և հարաբերության ամենաճշգրիտ արտահայտչամիջոցներից է: Ժեստերի ու հպման միջոցով կարելի է հասկանալ անգամ մարդու այն մտքերն ու զգացմունքները, որոնք չեն բարձրաձայնվել: Անեկդոտներում կանանց և տղամարդկանց վարքի զուգադրական համեմատությունը թույլ է տվել պարզել, որ նրանք հաղորդակցվելիս օգտագործում են իրենց զրուցակիցներին հավելու զանազան ձևեր: Մարդիկ դիպչում են իրար տարբեր պատճառներով, տարբեր ձևերով և տարբեր վայրերում:

Անգլիական կենցաղային անեկդոտներում մարդիկ հատկապես հիվանդագին են արձագանքում ամբարտավան շարժումներին՝ ուսին կամ մեջքին թփթփացնելուն, գլխին կամ այտին խփելուն և այլն: Ազգականների կամ մտերիմների միջև նման ժեստերն ընկալվում են որպես համակրանքի դրսևորում: Մակայն քիչ ծանոթ մարդու կողմից նման ժեստը ընկալվում է որպես անշնորհություն:

Միմյանց դիպչելու ամենատարածված ձևը **ձեռքսեղմումն** է, որը տարբերվում է իր կատարման ձևով, ուժով և տևողությամբ: Մարդու հետ առաջին հանդիպման ժամանակ ձեռքսեղմման միջոցով փոխանցվում է հնարավոր փոխհարաբերությունների երեք տիպերից մեկը՝ **զերազանցությունը/ ենթարկվողությունը, գիջողատությունը և հավասարությունը**: Այս տեղեկատվությունն անգիտակցաբար հաղորդվում է, սակայն այս կամ այն ձեռքսեղմումը նպատակատուղով կիրառելու դեպքում մարդկանց վրա կարելի է անմիջական ազդեցություն գործել:

Չափից ավելի ուժեղ ձեռքսեղմումը տղամարդկանց տարբերակիչ առանձնահատկությունն է. այդպես են վարվում միտումնավոր՝ ցանկանալով շեշտել իրենց ուժը: Ձեռքսեղմման ամենաազդեցիվ ձևը օգտագործում են տղամարդիկ (*տե՛ս աղյուսակ 2*): Այն բնորոշ է ազդեցիվ, իշխող տղամարդուն, որն էլ միշտ ձեռքսեղմման նախաձեռնողն է: Մակայն կանայք երբեմն ստիպված են ցուցադրել ամուր

ձեռքսեղմում՝ տղամարդկանցից պաշտպանվելու համար:

Անգլիական կենցաղային անեկդոտներում հաղորդակցվելիս **շոյելը, համբուրելը** կատարում են խրախուսական, հուզական աջակցության գործառույթ: Համբույրը, որպես հավողական ժեստի տարատեսակ, լայնորեն կիրառվում է մարդու կյանքի բոլոր բնագավառներում: Կոնկրետ առարկայով պայմանավորված՝ փոխվում է համբույրի բնույթը: Մայրը համբուրում է զավակին քնքշորեն և սիրով, իրար սիրող մարդկանց դեպքում դրանք կարող են լինել շուրթերի թեթև հպումից մինչև կրքոտ համբույրներ: Համբույրները կարող են լինել ինչպես զգացմունքների անկեղծ դրսևորում, այնպես էլ ձևական: Համբույրը, որպես ֆիզիկական շփման տարր, անգլիական անեկդոտներում կանանց վարքում դիտվում է միայն մտերմիկ հարաբերությունների դեպքում:

Ոչ խոսքային հաղորդակցման այնպիսի միջոց, ինչպիսին **գրկելն է (hug smb.; hug smb. from behind)**, ավելի հաճախ հանդիպում է թույլ սեռի ներկայացուցիչների շփումներում, տղամարդկանց շրջանում այն անհամեմատ քիչ է հանդիպում (*տե՛ս աղյուսակ 2*):

Գրկախառնության բնույթով, ուժով, տևողությամբ որոշվում է մարդու արտահայտած զգացմունքների նշանակությունը (**give a hug; hold smb. in a tender embrace; carefully embrace smb.; embrace smb. tightly; put smb.'s arm around smb.**):

Մտերիմ բարեկամները, երկար ժամանակ իրարից հեռու լինելով, հանդիպելիս իրար խեղդելու չափ ամուր գրկախառնվում են: Սիրահարները գրկում են իրար քնքշորեն ու տևական ժամանակ: Հեռավոր ազգականների միջև գրկախառնությունները, նախկինում եղած հարաբերություններով պայմանավորված, կարող են լինել ինչպես զուսպ, սառը, այնպես էլ խանդավառ:

Ուսին կամ մեջքին թփթփացնելը հիմնականում բնորոշ է տղամարդկանց (*տե՛ս աղյուսակ 2*): Այս ոչ խոսքային ժեստերը (**tap/ dab smb. on the shoulder; pat smb.'s hand; pat smb. on the head; pat smb.'s head; pat smb. on the arm; pat smb. on the back; tap smb. on the knee; hit smb. on the upper arm**) մեկնաբանվում են որպես բարեկամական վերաբերմունքի, մասնակցության կամ խրախուսման արտահայտություն: Այս ոչ խոսքային ժեստերը գործնականում առկա են բոլոր տարիքային խմբերում: Ոչ խոսքային ժեստերը՝ **tap smb. on the knee; tap/ dab smb. on the shoulder** օգտագործվում են նաև զրուցակցի ուշադրությունը գրավելու համար:

Հայումը լայնորեն տարածված է ոչ խոսքային հաղորդակցության մեջ: Տարբերությամբ հպումները զրուցակցի չարտահայտած զգացմունքների ցուցիչներն են (**touch the back of smb.'s head; touch smb.'s knees with yours; tip touch smb.'s hand; touch with**

the tips of one's fingers; touch smb.'s elbow; touch smb.'s chest): Դրանք կարող են լինել քնքուշ, սիրալիր, թեթև, ուժեղ, կոպիտ, վիրավորող և ավելի հաճախ նկատվում են կանանց վարքում (*տե՛ս աղյուսակ 2*): Մակայն անգլիական մշակույթում զրուցակցին առանց պատճառաբանության և աներեսաբար դիպչելն անթույլատրելի է հատկապես եթե առաջին շփումն է:

Ոչ խոսքային հաղորդակցությունը մարդկանց փոխգործակցության գործընթացում բնավ էլ վերջին տեղում չէ: Ոչ խոսքային հաղորդակցության միջոցները, որպես զգացմունքների յուրօրինակ լեզու, ինչպես և բառերի լեզուն, հասարակության զարգացման նույնպիսի արդյունք են: Ոչ խոսքային հաղորդակցության բոլոր ձևերը (**դիմախոսությունը, ժեստերը, հպումները** և այլն) փոխգործակցում են՝ երբեմն փոխարացնելով իրար երբեմն՝ հակասելով միմյանց:

Ոչ խոսքային մակարդակում հուզարտահայտչական միջոցների գենդերային առանձնահատկությունների վիճակագրությունը ներկայացնենք աղյուսակներում (*աղյուսակները Ա.Տ. Կնյազյանի*):

Աղյուսակ 1 Շարժաբանության միջոցները կանանց և տղամարդկանց խոսքում

	Կանայք	Տղամարդիկ
<i>Ժեստեր</i>	55%	45%
<i>Դիմախոսություն</i>	60%	40%

Աղյուսակ 2 Շոշափողական միջոցները (տակեսիկա) կանանց և տղամարդկանց խոսքում

	Կանայք	Տղամարդիկ
<i>Ձեռքսեղմում</i>	30%	70%
<i>Համբույր</i>	60%	40%
<i>Գրկախառնություն</i>	75%	25%
<i>Ուսին կամ մեջքին թփթփացնել</i>	20%	80%
<i>Հպում</i>	75%	25%

Հետազոտելով գենդերային տարբերությունները ոչ խոսքային հաղորդակցության մակարդակում՝ կարելի է եզրակացնել, որ գենդերը չափազանց կարևոր դեր է կատարում: Նկարագրելով ցանկացած անհատի վարքագիծը որոշակի իրավիճակում՝ կարող ենք ճշգրտորեն որոշել, թե գենդերային որ տիպին է պատկանում տվյալ մարդը:

Գրականություն

- Henley N.M., La France M. Gender as culture: Difference and dominance in nonverbal behavior. In A. Wolfgang (Eds.), Non-verbal Behavior: Perspectives, Applications, Intercultural Insights. Lewiston, NY: C.J. Hogrefe. 1984. p. 351-371.
- Leathers Dale G. Nonverbal Communication Systems. Boston: Allyn and Bacon. 1976.
- Бехтерев В.М. Избранные работы по социальной психологии Москва.: «НАУКА», 1994.
- Горелов И. Н. Невербальные компоненты коммуникации. М.: Наука, 1980.
- Князян А. Гендерные различия в тактильном поведении (*на материале английских "бытовых" анекдотов*). // Филологические науки. Вопросы теории и практики. Тамбов: Грамота, 2015, № 3 (45): в 3-х ч. Ч. III.с.88-91
- Гаспарян С.К., Князян А.Т. Гендерные различия в невербальной коммуникации (*на материале английских "бытовых" анекдотов*). // Лեզուն և գրականությունը գիտ. իմացության ժամանակակից հարացույցում: Գիտ. հոդվածների ժողովածու N 6, Երևան, 2010, էջ 120-129:
- Рюкле X. Ваше тайное оружие в общении. Мимика, жест, движение. М., 1996.
- Чанышева З.З. Лексические средства обозначения паралингвистических компонентов речи в современном английском языке. Дис. ... канд. филол. наук. М.: Институт иностранных языков им. Мориса Тореза, 1979.

REFERENCES

- Khenli N.M., La Frans M. Gender kak kul'tura: razlichiya i dominirovaniye v neverbal'nom povedenii. V A. Vol'fgang (red.), Neverbal'noye povedeniye: perspektivy, primeneniya, mezhkul'turnyye idei. L'yuiston, shtat N'yu-York: C.J. Hogrefe, 1984. p. 351-371
- Lezers Deyl G. Neverbal'nyye kommunikativnyye sistemy. Boston: Allin i Bekon. 1976 g.
- Bekhterev V.M. Izbrannyye raboty po sotsial'noy psikhologii Moskva: «NAUKA», 1994.
- Gorelov I. N. Neverbal'nyye komponenty kommunikatsii. M. : Nauka, 1980.
- Knyazyan A. Gendernyye razlichiya v takti'l'nom povedenii (na materiale angliyskikh «bytovykh» anekdotov). Voprosy teorii i praktiki. Tambov: Gramota, 2015, № 3 (45): v 3-kh ch. CH. III.s.88-91
- Gasparyan S.K., Knyazyan A.T. Gendernyye razlichiya v neverbal'noy kommunikatsii (na materiale angliyskikh «bytovykh» anekdotov). // Lezun ev grakanut'yuna git. imac'ut'yan zama-nakacic' harac'uyc'um: Git. acneri zogovacu N 6, Erevan, 2010, 120-129:
- Ryukle KH. Vashe taynoye oruzhiye v obshchenii. Mimika, zhest, dvizheniye. M., 1996.
- Chanysheva Z.Z. Leksicheskiye sredstva oboznacheniya paralingvistsicheskikh komponentov rechi na sovremennom angliyskom yazyke. Dis. ... Kand. filol. nauk. M. : Institut inostrannykh yazykov im. Morisa Toreza, 1979.

Non-verbal means in the emotional speech of men and women

A. T. Knyazyan, T. R. Margaryan

Abstract. The article deals with non-verbal means of expression in the speech of men and women. The non-verbal behavior of women differs from that of men. In this regard, it is especially important to study the non-verbal components of communication, reflecting a person's emotional reactions. Various non-verbal communication components are used to express the emotional responses of both men and women. Emotions, like information, can be conveyed in one or more non-verbal ways.

Keywords: gender, non-verbal means, kinesics, tactile behaviour, emotions.